ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2/3.1-2-25

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2025թ. հունիսի 11-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 23-ի «2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագիրը, 2025 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» N3037-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** (այսուհետ՝ Ծրագիր) հավելված 2-ի 3.1 կետով նախատեսված **«Աջակցություն Հայաստանում փառատոների կազմակերպմանը»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ, Հանձնաժողովի նախագահ
Դ.Կարապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության պետ
Ա.Բաբայան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ
Լ.Բասմաչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Ա.Ոսկանյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Զ.Հայրապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

- Մրցույթի արդյունքների ամփոփում:

Լսեցին՝

Հանձնաժողովին ներկայացվեց, որ **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** շրջանակներում հայտարարված կազմակերպությունների ընտրության մրցույթի գործընթացը իրականացվել է armeps.am համակարգի միջոցով:

Նշվեց, որ

1. Armeps.am համակարգի միջոցով Ծրագրի հավելված 2-ի 3.1 կետով նախատեսված **«Աջակցություն Հայաստանում փառատոների կազմակերպմանը»** միջոցառման իրականացման նպատակով ներկայացվել է 8 (ութ) հայտ, հետևյալ ֆինանսական առաջարկներով՝

- **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՎԻԱՑԻԱՅԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ»**-ի (25,000,000 (քսանհինգ միլիոն) ՀՀ դրամ),
- **«Երևանյան հեռանկարներ միջազգային երաժշտական փառատոն» ՀԿ**-ի (14,835,000 (տասնչորս միլիոն ութ հարյուր երեսունհինգ հազար) ՀՀ դրամ),
- **«Այ-Լինկ գաղափարների բաց հարթակ կրթամշակութային» ՀԿ**-ի (17,964,000 (տասնյոթ միլիոն ինը հարյուր վաթսունչորս հազար) ՀՀ դրամ),
- **«ՄԵԴԻԱ ՕՆԻՔՍ» ՍՊԸ**-ի (6,220,000 (վեց միլիոն երկու հարյուր քսան հազար) ՀՀ դրամ),
- **«Տաթևի Վերածնունդ» Հիմնադրամի** (17,600,000 (տասնյոթ միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ),
- **«Հայաստանի Զարգացման Նախաձեռնություններ» բարեգործական Հիմնադրամի** (19,965,000 (տասնինը միլիոն ինը հարյուր վաթսունհինգ հազար) ՀՀ դրամ),
- **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՆՈՏՈՒՐԻԶՄԻ ԽՈՐՀՈՒՐԴ» ՀԿ**-ի (22,145,833.33 (քսաներկու միլիոն հարյուր քառասունհինգ հազար ութ հարյուր երեսուներեք) ՀՀ դրամ),
- **«Արեգակ Արդար» ՍՊԸ**-ի (45,758,300 (քառասունինգ միլիոն յոթ հարյուր հիսունութ հազար երեք հարյուր) ՀՀ դրամ) կողմից:

2. Armeps.am համակարգի միջոցով հանձնաժողովի անդամների գնահատման արդյունքում Ծրագրի հավելված 2-ի 3.1 կետով նախատեսված **«Աջակցություն Հայաստանում փառատոների կազմակերպմանը»** միջոցառման իրականացման նպատակով ներկայացված թվով 5 **(հինգ)** կազմակերպության՝

- **«Երևանյան հեռանկարներ միջազգային երաժշտական փառատոն» ՀԿ**-ի,
- **«Այ-Լինկ գաղափարների բաց հարթակ կրթամշակութային» ՀԿ**-ի,
- **«Հայաստանի Զարգացման Նախաձեռնություններ» բարեգործական Հիմնադրամի**,
- **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՆՈՏՈՒՐԻԶՄԻ ԽՈՐՀՈՒՐԴ» ՀԿ**-ի,
- **«Արեգակ Արդար» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտերը չեն համապատասխանում մրցույթի հրավերի պահանջներին:

Մասնավորապես.

- **«Երևանյան հեռանկարներ միջազգային երաժշտական փառատոն» ՀԿ**-ի կողմից ներբեռնված հայտում՝

- ներկայացված չէ կազմակերպության կանոնադրությունը,

- պահպանված չէ ՀՀ ԱՆ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պետական միասնական գրանցամատյանից քաղվածքի վաղեմության ժամկետը (ոչ ուշ քան 3-օրվա վաղեմության),

- կազմակերպության կողմից ներկայացված ծրագիրը և ֆինանսական նախահաշվով ներկայացված ծախսերը հստակ չեն, օրինակ՝ Ծրագրում նախատեսված են ավտոբուսներ, իսկ ֆինանսական նախահաշվում սահմանված է, որ տրանսպորտային միջոցները հատկացվելու են հրավիրված երաժիշտներին սպասարկելու համար. մրցույթի հրավերի 2.4.1 կետով նախատեսված էր ներքին և ներգնա զբոսաշրջիկների, լրագրողների, հատուկ հյուրերի համար 50 նստատեղ ունեցող

առնվազն 2 անվճար զբոսաշրջային ավտոբուսի ծառայության ապահովում (ավտոբուսի դիմապակուն ապահովել փառատոնի անվան տեսանելիությունը):

Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ եթե ներկայացված միջոցառումները իրականացվելու են, սակայն դրանց համար նախատեսված է համաֆինանսավորում, ապա դրա մասին տեղեկատվությունը պետք է արտացոլված լիներ կազմակերպության կողմից ներկայացված ֆինանսական նախահաշվում՝ համաձայն Հրավերի 2.4 կետի 7-րդ ենթակետի (ծրագրի իրականացման ֆինանսական նախահաշիվ՝ տեղեկատվություն իրականացվող միջոցառումների անվանումների, քանակի, միավորի գնի և դրանց համար նախատեսվող ծախսերի՝ այդ թվում համաֆինանսավորման վերաբերյալ):

- **«Այ-Լինկ գաղափարների բաց հարթակ կրթամշակութային» ՀԿ**-ի կողմից ներբեռնված հայտում՝

- Ֆինանսական նախահաշիվը ներառում է աշխատավարձ, ինչը հակասում է Հրավերի 2.3-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջին,

- Մրցույթին նախատեսված պայմաններով մասնակցելու վերաբերյալ կազմակերպության իրավասու մարմնի որոշման մեջ մրցույթի ծածկագիրը սխալ է նշված,

- ներկայացված պորտֆոլիոն և ինքնակենսագրականները ստորագրված չեն:

- **«Հայաստանի Զարգացման Նախաձեռնություններ» բարեգործական Հիմնադրամի** կողմից ներբեռնված հայտում՝

- կցված չեն առնվազն 2 փառատոնի կազմակերպման փորձը հավաստող կնքված պայմանագրեր, այդ թվում՝ հանձնման ընդունման ակտեր և այլն: Կցված են 1 փառատոնի կազմակերպման շրջանակում կնքված պայմանագրեր՝ հակասելով նաև Մրցույթի հրավերի 2.3 կետի 1-ին ենթակետի պահանջին,

- մրցույթին նախատեսված պայմաններով մասնակցելու վերաբերյալ կազմակերպության իրավասու մարմնի որոշման մեջ մրցույթի ծածկագիրը նշված է սխալ,

- ինքնակենսագրականները ստորագրված և կնքված չեն կամ էլեկտրոնային ստորագրությամբ չեն ներկայացվել:

- **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՆՈՏՈՒՐԻԶՄԻ ԽՈՐՀՈՒՐԴ» ՀԿ**-ի կողմից ներբեռնված հայտում՝

- Ֆինանսական նախահաշիվը ներառում է աշխատավարձ, ինչը հակասում է Հրավերի 2.3-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջին:

- **«Արեգակ Արդար» ՍՊԸ**-ի կողմից ներբեռնված հայտում՝

- ֆինանսական նախահաշիվը ներառում է աշխատավարձ, ինչը հակասում է Հրավերի 2.3-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջին,

- կցված չեն առնվազն 2 փառատոնի կազմակերպման փորձը հավաստող կնքված պայմանագրեր, այդ թվում՝ հանձնման ընդունման ակտեր և այլն: Կցված հուշագրերում հստակ չի երևում՝ ինչ փառատոնի համար են համագործակցել կամ արդյոք տեղի է ունեցել փառատոնը, թե ոչ: Ակտեր չկան կցված:

- ներկայացված չէ կազմակերպության կանոնադրությունը,

- պահպանված չէ ՀՀ ԱՆ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պետական միասնական գրանցամատյանից քաղվածքի վաղեմության ժամկետը (ոչ ուշ քան 3-օրվա վաղեմության):

Թվով 3 (երեք) կազմակերպության՝

- **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՎԻԱՑԻԱՅԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ»-ի,**
- **«ՄԵԴԻԱ ՕՆԻՔՍ» ՍՊԸ-ի,**
- **«Տաթևի Վերածնունդ» Հիմնադրամի** կողմից ներկայացված հայտերը համապատասխանում են մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին:

Միաժամանակ նշվեց, որ 3 (երեք) կազմակերպության հայտում առկա են որոշակի տեխնիկական խնդիրներ, որոնք չեն կարող համարվել բովանդակային կամ իրավական թերություններ: Ուստի, մրցութային Հանձնաժողովի կողմից առաջարկվեց շտկել դրանք, մասնավորապես՝

- **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՎԻԱՑԻԱՅԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ»-ին՝**

- մրցույթին նախատեսված պայմաններով մասնակցելու վերաբերյալ կազմակերպության իրավասու մարմնի որոշման մեջ կատարել մրցույթի ծածկագրի շտկում,

- **«ՄԵԴԻԱ ՕՆԻՔՍ» ՍՊԸ-ին՝**

- առաջարկում է վերանայել փառատոնի անցկացման ժամկետը՝ հաշվի առնելով, որ 2025 թվականի սեպտեմբերի առաջին տասնօրյակում նախատեսվում է իրականացնել Ներքին զբոսաշրջային ցուցահանդեսը: Նախատեսել փառատոնը օգոստոսի ամսին կամ Ներքին ցուցահանդեսի ժամկետից հետո:

- **«Տաթևի Վերածնունդ» Հիմնադրամին՝**

- մրցույթին նախատեսված պայմաններով մասնակցելու վերաբերյալ կազմակերպության իրավասու մարմնի որոշման մեջ կատարել մրցույթի ծածկագրի շտկում,
- ներկայացնել կանոնադրության վերջին խմբագրությամբ տարբերակը (ներկայացված է կանոնադրությունը, սակայն նշված չէ՝ արդյոք վերջին խմբագրությամբ տարբերակն է, թե ոչ),
- ստորագրված ներկայացնել ֆինանսական նախահաշիվը (Տեխնիկական բաժնում այն ստորագրությամբ չէր ներկայացված):

Հանձնաժողովի կողմից քննարկվեց նաև, հաղթող կազմակերպությունների կողմից ներկայացված ֆինանսական նախահաշիվներով պահանջված գումարների վերանայման հարցը:

Մասնավորապես.

- **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՎԻԱՑԻԱՅԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ»-ի** կողմից **«Արմենիա Էյր Ֆեստ 2025»** փառատոնի կազմակերպման համար նախահաշվով ներկայացված 25,000,000 (քսանհինգ միլիոն) ՀՀ դրամ (առանց ԱԱՀ) գումարը նվազեցնել և ներկայացնել նոր նախահաշիվ 5,000,000.0 (հինգ միլիոն) ՀՀ դրամ (առանց ԱԱՀ) գումարի չափով,
- **«ՄԵԴԻԱ ՕՆԻՔՍ» ՍՊԸ-ի** կողմից **«Արհեստեստների և արվեստների համահայկական»** 13-րդ փառատոնի կազմակերպման համար նախահաշվով ներկայացված (6,220,000 (վեց միլիոն երկու հարյուր քսան հազար) ՀՀ դրամ (առանց ԱԱՀ) գումարը նվազեցնել և ներկայացնել նոր նախահաշիվ 2,500,000.0 (երկու միլիոն հինգ հարյուր հարզար) ՀՀ դրամ (առանց ԱԱՀ) գումարի չափով,
- **«Տաթևի Վերածնունդ» Հիմնադրամի** կողմից «Սարերում Իմերսիվ փառատոն, 2025» փառատոնի կազմակերպման համար նախահաշվով ներկայացված 17,600,000 (տասնյոթ միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ գումարը նվազեցնել և ներկայացնել նոր նախահաշիվ 2,500,000.0 (երկու միլիոն հինգ հարյուր հարզար) ՀՀ դրամ (առանց ԱԱՀ) գումարի չափով:

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. **Մերժել** Ծրագրի հավելված 2-ի 3.1 կետով նախատեսված **«Աջակցություն Հայաստանում փառատոների կազմակերպմանը»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթի հրավերի պահանջներին չհամապատասխանող փաստաթղթեր ներկայացրած թվով թվով 5 (հինգ) կազմակերպության՝

- **«Երևանյան հեռանկարներ միջազգային երաժշտական փառատոն»** ՀԿ-ի,
- **«Այ-Լինկ գաղափարների բաց հարթակ կրթամշակութային»** ՀԿ-ի,
- **«Հայաստանի Զարգացման Նախաձեռնություններ» բարեգործական Հիմնադրամի**,
- **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՆՈՏՈՒՐԻԶՄԻ ԽՈՐՀՈՒՐԴ»** ՀԿ-ի,

«Արեգակ Արդար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը:

2. **Առաջարկել՝** Ծրագրի հավելված 2-ի 3.1 կետով նախատեսված **«Աջակցություն Հայաստանում փառատոների կազմակերպմանը»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված դրամաշնորհային մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին համապատասխանող թվով 3 (երեք) կազմակերպություններին շտկել իրենց կողմից ներկայացված հայտերում առկա տեխնիկական խնդիրները, մասնավորապես՝

- **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՎԻԱՑԻԱՅԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ»-ին՝**

- մրցույթին նախատեսված պայմաններով մասնակցելու վերաբերյալ կազմակերպության իրավասու մարմնի որոշման մեջ կատարել մրցույթի ծածկագրի շտկում,

- **«ՄԵԴԻԱ ՕՆԻՔՍ» ՍՊԸ-ին՝**

- վերանայել փառատոնի անցկացման ժամկետը՝ հաշվի առնելով, որ 2025 թվականի սեպտեմբերի առաջին տասնօրյակում նախատեսվում է իրականացնել Ներքին զբոսաշրջային ցուցահանդեսը:

- **«Տաթևի Վերածնունդ» Հիմնադրամին՝**

- մրցույթին նախատեսված պայմաններով մասնակցելու վերաբերյալ կազմակերպության իրավասու մարմնի որոշման մեջ կատարել մրցույթի ծածկագրի շտկում,
- ներկայացնել կանոնադրության վերջին խմբագրությամբ տարբերակը,
- ստորագրված ներկայացնել ֆինանսական նախահաշիվը (Տեխնիկական բաժնում այն ստորագրությամբ չէր ներկայացված):

3. **Առաջարկել՝** Ծրագրի հավելված 2-ի 3.1 կետով նախատեսված **«Աջակցություն Հայաստանում փառատոների կազմակերպմանը»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված դրամաշնորհային մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին համապատասխանող թվով 3 (երեք) կազմակերպություններին վերանայել և նվազեցնել իրենց կողմից ներկայացված ֆինանսական նախահաշիվներով սահմանված գումարները, մասնավորապես՝

- **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՎԻԱՑԻԱՅԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ»-ի** կողմից **«Արմենիա Էյր Ֆեստ 2025»** փառատոնի կազմակերպման համար նախահաշվով ներկայացված 25,000,000 (քսանհինգ միլիոն) ՀՀ դրամ (առանց ԱԱՀ) գումարը նվազեցնել և ներկայացնել նոր նախահաշիվ 5,000,000.0 (հինգ միլիոն) ՀՀ դրամ (առանց ԱԱՀ) գումարի չափով,

- **«ՄԵԴԻԱ ՕՆԻՔՍ» ՍՊԸ-ի** կողմից **«Արհեստեստների և արվեստների համահայկական»** 13-րդ փառատոնի կազմակերպման համար նախահաշվով ներկայացված (6,220,000 (վեց միլիոն

երկու հարյուր քսան հազար) ՀՀ դրամ (առանց ԱԱՀ) գումարը նվազեցնել և ներկայացնել նոր նախահաշիվ 2,500,000.0 (երկու միլիոն հինգ հարյուր հարզար) ՀՀ դրամ (առանց ԱԱՀ) գումարի չափով,

- **«Տաթևի Վերածնունդ» Հիմնադրամի** կողմից «Սարերում Իմերսիվ փառատոն, 2025» փառատոնի կազմակերպման համար նախահաշվով ներկայացված 17,600,000 (տասնյոթ միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ գումարը նվազեցնել և ներկայացնել նոր նախահաշիվ 2,500,000.0 (երկու միլիոն հինգ հարյուր հարզար) ՀՀ դրամ (առանց ԱԱՀ) գումարի չափով:

Առաջարկը ընդունելու դեպքում շտկել առաջարկված տեխնիկական խնդիրները, ինչպես նաև Ծրագրի ֆինանսական նախահաշիվը և մրցութային հանձնաժողովին՝ **մինչև 2025 թվականի հունիսի 27-ը,** ներկայացնել շտկված տարբերակները:

Վերոգրյալ առաջարկը ընդունած կազմակերպությունները հաղթող կճանաչվեն և նրանց հետ կկնքվեն համապատասխան դրամաշնորհային պայմանագիր:

4. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ա.Մկրտչյան - _____
(Հանձնաժողովի նախագահ)

Դ.Կարապետյան - _____

Ա.Բաբայան - _____

Լ.Բասմաչյան - _____

Ա.Ոսկանյան - _____

Զ.Հայրապետյան - _____

Շ.Հովսեփյան - _____